

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

### ԱՄԲԱՍԱԴՐՈՒՄԸ ԿԱՆԽԱԳԾԵՅՆ ԱՌԱՋԻԿԱԿԱ ՇՐԱԳՐԵՐԸ

Օգոստոսի 4-ին Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում բացվեց եւ մինչեւ օգոստոսի 7-ը շարունակվեց արտասահմանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների մասնակցությամբ անցկացված հանդիպումը (Ամբաստորիալը):



Ամբաստորիալի աշխատանքին, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներից բացի, մասնակցեցին Վրաստանի օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության ղեկավարները, որոնց թվում էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին: Ամբաստորիալում իր բացման խոսքով ելույթ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, խոսեց Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի մասին: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

### ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ՈՒԵԼՍԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՅԵՐԸ



Օգոստոսի 5-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նախագահական նստավայրում հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպանների հետ:

Հանդիպմանը քննարկվեցին ՆԱՏՕ-ի Ուելսի առաջիկա գագաթաժողովի նախապատրաստության հետ կապված հարցերը:

Գիորգի Մարգվելաշվիլին հույս հայտնեց, որ գագաթաժողովին արժանվույն զննատեսական կտրվի այլապես ինտեգրման եւ ժողովրդավարության զարգացման ուղու վրա Վրաստանի առաջընթացին:

Կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանային անվտանգության հետ առնչվող հարցեր, առանձնակի խոսակցություն տարվեց Ուկրաինայում ստեղծված իրավիճակի եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների սրման վերաբերյալ:

Վրաստանի նախագահը դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին շնորհակալություն հայտնեց Եվրատլանտյան կառույցների Վրաստանի ինտեգրման գործում ցուցաբերած աջակցության համար:

## ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

### ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ ԺԱՄԱՆԱԿՎՈՐԱՊԵՍ ԿՍԿՍԻ ԳՈՐԾԵԼ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը Եվրախորհրդի գլխավոր քարտուղարությունից ստացել է պաշտոնական նոտա Եվրամիության կողմից ասոցիացման համաձայնագրի առանձին հատվածների ժամանակավոր կիրարկման համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտման կապակցությամբ:

Իր հերթին, Վրաստանի ԱԳ նախարարությունը քարտուղարությանը պաշտոնապես տեղեկացրել է հուլիսի 25-ին ասոցիացման համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտման մասին:

Հետեւաբար, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ասոցիացման համաձայնագրի առանձին հատվածները ժամանակավորապես ուժի մեջ կմտնեն 2014 թվականի սեպտեմբերի 1-ից: Վերոնշյալի հաշվառմամբ, սեպտեմբերի 1-ից կկիրարկվի համաձայնագրի հատվածների 80 տոկոսը, այդ թվում՝ համընդհանուր եւ ծավալուն առեւտրի բաղադրիչը:

## ԲԱՐԵՓՈՒՄ

### ԴԱԿԻԹ ՍԱԳԱՆԵԼԻՉԵ. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՇՆԱՆԸ ԿՎԵՐՍԿՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ» ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱԶԳՎԵՑ ՎԵՑ ԱՄՍՈՎ

Խորհրդարանական մեծամասնության լիդեր Դավիթ Սագանելիձեն, մեկնաբանելով սահմանադրության առկա խնդիրները, հաստատեց, որ անհրաժեշտության վերաբերյալ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարությունը, նշեց, որ ներկայումս գործում են առանձին օրենքներ, որոնք հակադրվում են Սահմանադրության հոդվածներին, եւ օրենսդրական բազան կարգավորման կարիք ունի:

«Կան օրենքներ, որոնք բացարձակապես չեն համապատասխանում Սահմանադրության հոդվածներին, ուստի ծագեց առկա շեղումները կարգավորելու նպատակով աշխատանքի վերսկսման անհրաժեշտությունը», - հայտարարեց Դավիթ Սագանելիձեն: Հիեցնենք, որ ամբաստորիալում իր ելույթում վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՀԻՇԱՏԱԿԻ ՇԱՐԱԹ

### ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ԶՈՅՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Օգոստոսի 8-ին լրացավ Ռուսաստան-Վրաստան օգոստոսյան պատերազմի վեցերորդ տարելիցը:

Օգոստոսի 4-ին Վրաստանում մեկնարկեց 2008 թվականի օգոստոսյան պատերազմի եւ Աֆղանստանում խաղաղարարական առաքելության կատարման ժամանակ գոհված զինծառայողների հիշատակի շաբաթը:

Հիշատակի շաբաթվա շրջանակներում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների ներկայացուցիչներն այցելեցին Մուխաթբեկի գերեզմանատուն, ծաղկեպսակներ դրեցին երկրի տարածքային ամբողջականության համար գոհվածների հերոսների շիրմերին:



Ծաղկեպսակներ դրվեցին նաեւ Թբիլիսիի հերոսների հրապարակում գտնվող հուշահամալիրին:

Թբիլիսիի Վարկեթիլի թաղամասում գտնվող Վախտանգ Գորգասալու տաճարում մատուցվեց սգո պատարագ:

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԳՐԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՆՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԿԶԱՆԳԻՊԵՆ ՍՈՉԻՈՒՄ

Սոչիում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման կապակցությամբ, տարածված տեղեկատվությամբ, օգոստոսի 9-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը առանձին հանդիպումներ կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիևի հետ: Հայկական կողմը պատրաստակամություն է հայտնել այցի շրջանակում անցկացնել նաեւ եռակողմ հանդիպում՝ Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի նախագահների հետ՝ քննարկելու դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրները, ինչպես նաեւ վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանագծում ստեղծված իրավիճակը:

### ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆՀԱՆԳՍԱՅԱՍԾ Է ՀԱՅ-ԱԳՐԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՐԸ

Վրաստանի իշխանությունները վստահ են, որ Հայաստանն ու Ադրբեջանը ընդհանուր լեզու կգտնեն եւ համաձայնության կգան: Սեկնաբանելով Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը՝ օգոստոսի 4-ին համապատասխան հայտարարությամբ հանդես են եկել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

«Վրաստանի իշխանությունը մտահոգված է մեր երկու եղբայրական պետությունների միջեւ ստեղծված իրավիճակով: Ցանկանում են միանալ տարածաշրջանում իրավիճակի սրացումը կանխելու ուղղված կոչերին: Դա մեծ նշանակություն ունի ինչպես Հայաստանի եւ Ադրբեջանի, այնպես էլ՝ տարածաշրջանի համար: Տարածաշրջանի կայունությունը բոլորիս է պետք: Երկու երկրների միջեւ երկխոսությունը պետք է վերականգնվի, եւ ես վստահ եմ, որ նրանք ընդհանուր լեզու կգտնեն», - նշեց Վրաստանի նախագահը:

«Մենք ուշադրությամբ եւ անհանգստությամբ հետեւում ենք հարեւան երկրներում ծավալվող իրադարձություններին: Ես հույս ունեմ եւ վստահ եմ, որ նրանք կկարողանան համաձայնության գալ, եւ տարածաշրջանում կիշխի խաղաղությունը: Դա շատ կարեւոր է», - հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Հայ-ադրբեջանական սահմանադրարժեքները նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: Նա համոզմունք հայտնեց, որ Ադրբեջանն ու Հայաստանը հրադադարի կհասնեն, եւ տարածաշրջանում կիշխի խաղաղությունը: Դա շատ կարեւոր է», - հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Հայ-ադրբեջանական սահմանադրարժեքները նաեւ Վրաստանի վարչապետը:





